ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ՀՈՒԼԻՍԻ 8-10-Ը ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Բելառուսի Հանրապետություն (Մինսկ), 2019թ. հուլիսի 8-ից 10-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Բեռալուսի Հանրապետության տրասնպորտի և հաղորդակցության նախարար

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Քննարկել տրանսպորտի բնագավառում համագործակցության ընթացիկ հարցեր, նախանշել համագործակցության նոր ուղղություններ

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   - Համագործակցության հարցերի քննարկում, տեղեկատվության փոխանակում
   - Ապրանքաշրջանառության դիվերսիֆիկացիայի հետ կապված հարցեր
   - Ուղևորահոսքերի և բեռնափոխադրումների վերաբերյալ հարցեր
   - Ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտի, լաստանավային փոխադրումների հետ կապված հարցեր
   - Ավիացիայի բնագավառում համագործակցության հարցեր, ներառյալ ավիատոմսերի գնագոյացումը
   - Այլ հարցրեր

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպում է կայացել Բելառուսի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարար Ա. Ավրամենկոյի հետ: Քննարկվել են տրանսապորտի բնագավառում, ինչպես երկկողմ այնպես էլ ԵԱՏՄ շրջանակներում համագործակցության խորացման հնարավորությունները:

Քննարկվել է ավտոմոբիլային փոխադրումների թույլտվությունների սահմանաքանակն ավելացնելու հնարավորությունը: Քննարկվել են տրանսապորտային հաղորդակցությունն ակտիվացնելու հարցը՝ ապրանքների արտահանման խթանման նպատակով:

Ճանապարհաշինության բնագավառում Բելառուսի ճանապարհների կառուցապատման մեջ կիրառվող տեխնոլոգիաներին և օգտագործվող բաղադրանյութերին ծանոթանալու նպատակով առաջարկվել է կազմակերպել հայ մասնագետների աշխատանքային խմբի այց:

Քնարկվել է Մինսկ-Երևան-Մինսկ ուղիղ չվերթի հաճախականությունների հետ կապված

հարցեր, ավիատոմսերի մատչելիության հետ կապված հարցեր դեպի Հայաստան զբոսաշրջության ավելացման նպատակով:
Այցելություններ են եղել Մինսկի տրակտորների գործարան, Մինսկի քաղաքացիական ավիացիայի N407 գործարան, Մինսկի ավտոմոբիլների գործարան: Մանրամասն ներկայացվել է գործարանների արտադրանքը և մատուցվող ծառայությունները: Քննարկվել է գործարանի կողմից արտադրվող գյուղատնտեսական տեխնիկան մատչելի պայմաններով Հայաստան ներմուծելու, ինչպես նաև երրորդ երկրներ արտահանելու հնարավորությունները: Մինսկի քաղաքացիական ավիացիայի N 407 գործարանում ներկայացվել են ինքնաթիռների վերանորոգման և արդիականացման, տեխնիկական սպասարկման պայմանները՝ Հայաստանի կողմից ազգային ավիափոխադրող ունենալուց հետո համագործակցություն սկսելու նպատակով:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Մինսկում ձեռք բերված պայմանավորվածությունները կքննարկվեն սեպտեմբերին Երևանում նախատեսվող ԵԱՏՄ տրանսպորտի ոլորտը համակարգող նախարարների հանդիպման շրջանակներում, ինչպես նաև դրան նախորդող միջազգային ավտոմոբիլային փոխարդրումների հարցերով խառը հանձնաժողովի՝ Երևանում կայանալիք նիստի ընթացքում:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքները բելառուսական կողմի հետ համապատասխան մասնագետների փորձագետների մակարդակով այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման նպատակով:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11 հուլիսի 2019թ.